

Դ. ԳԵՆՆԱԴԻ

(Լեճիճգրադ)

ՀՆԱԳՈՒՅՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՂԵՍՏԻՆՈՒՄ ԵՎ ԿԻԼԻԿԱՆ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ֆեոդալական այն զաղութներում, որ խաչակիրները հիմնել էին Արևելքում, ձևավորվել և գործում էր ֆեոդալական զարգացած իրավունքը: Առավել ամբողջականությամբ աչքի էր ընկնում Երուսաղեմի թագավորության օրենսդրությունը: Օրենքների ժողովածուներն ու իրավաբանների տրակտատները արտացոլում էին այդ թագավորության մեջ գոյություն ունեցող հասարակական հարաբերությունները: Միաժամանակ դրանք պատկերում են նաև այն հնագույն ինստիտուտները, որ գոյություն ունեին Արևելքում: Այդ ինստիտուտները երևում են նաև Կիլիկյան թագավորության իրավունքում: Ա. Բենյոն և հայագետ Ի. Կարստը նշել են այդ սոցիալական ու իրավական երևույթներից մի քանիսը, որոնք զալիս են խոր անցյալից¹: Սակայն հպանցիկ այդ դիտողությունները չզարգացվեցին, և հիշյալ յուրահատուկ ինստիտուտները նորագույն պատմաբանների տեսադաշտից դուրս մնացին:

Պարտքի դիմաց ստրուկ դարձնելը կամ պարտազանց ստրկությունը հնագույն պատմական ժամանակաշրջանում լայնորեն տարածված էր Մերձավոր արևելքում²: Ինքն իրեն ստրկության վաճառելը մեծ մասամբ իրենից ներկայացնում է ազատի այնպիսի վաճառք, որի ժամանակ նրա սուբյեկտիվ շահը համընկնում էր այն օբյեկտիվ անհրաժեշտության հետ, որը նրա համար առաջացել էր որոշակի հանգամանքների շնորհիվ:

1

XII—XIII դարերում Պաղեստինի այն մասերում, որ նվաճել էին խաչակիրները, աշխուժանում են ինքնավաճառումը և պարտքի դիմաց ստրկացումը:

Քաղաքացիների դատարանի օրենքների ժողովածուն, որը գործադրվում էր Երուսաղեմի թագավորության քաղաքացիների միջավայրում «Քաղաքացիների դատարանի ասսիզների գիրք» անվան տակ, կարգավորում էր նաև ազատների ինքնավաճառքը: Հստ այդ օրենքների, 15 տարին լրացած մարդը իրավունք ուներ օտարել իր ազատությունը: Նրան վաճառող միջնորդը ստանում էր վաճառվողի գնի մի մասը, իսկ մյուս մասը ստանում էր վաճառվողը:

¹ A. A. Beugnot, Note b a p. 189. Assises de Jérusalem, T. I. P. p. A. A. Beugnot, Paris, 1841, pp. 189—190. J. Karst, Armenisches Rechtsbuch, Band II, Strasbourg, 1905, SS. 242 ff, 257, 313.

² В. В. Струве, Борьба с рабством — должничеством в Вавилонии и Палестине, Палестинский сборник, 3 (66), 1958, стр. 3 и сл. J. Bottéro, Desordre économique et annulation des dettes en Mesopotamie à l'époque paléo-babylonienne, Journal of Economic and Social History of the Orient, Vol. IV, Part II, 1961, pp. 140 etc.

Եթե վերջինս չէր ստանում իր հասանելիքը, ապա վաճառքը չեղյալ էր համարվում³:

Դրա պատճառն այն էր, որ վաճառքի ժամանակ բացակայում էր վաճառվողի կամքի արտահայտումը և ինքը՝ վաճառվողը: Թույլատրելով ինքնավաճառումը, օրենքը բացառում էր կողմնակի անձանց կողմից ազատի բռնի վաճառքը: Այդ դեպքում կողմնակի անձինք պատժվում էին: Եթե մեկը վաճառեր քրիստոնյային (առանց վերջինիս մասնակցության), ապա պետք է ծառայեր սենյորիային այնքան տարի, ինչքան որ ի վիճակի կլիներ ծառայել սերժանտը, եթե վարձվեր տվյալ վաճառքից ստացված գումարով: Այդ դեպքում միջնորդը պետք է կատարեր որոշակի աշխատանք: Նա կարող էր նաև ազատվել դրանից, եթե վճարեր այնպիսի փրկագումար, որը երեք անգամ գերազանցեր քրիստոնյայի վաճառքից սպասվող գումարը⁴:

Եթե վաճառքի դեպքում օրենքի խախտումներ չէին լինում, ապա ինքն իրեն վաճառողը զրկվում էր ազատությունից և զրկվում գնողի լիակատար իրավասության տակ: Իսկ եթե վաճառքի՝ օրենքով թույլատրված ձևերը խախտվում էին, ապա ազատին վաճառողը հարկադրվում էր անվճար ծառայել սենյորիային և զրկվում էր ազատությունից՝ կամ որոշ ժամանակով և կամ ցմա՛հ: Փրկագումար վճարելու դեպքում նրա ստրկացումը ժամանակավոր էր լինում: Միանգամայն ակնհայտ է, որ թե՛ մեկը, թե՛ մյուսը դառնում էին ստրուկ:

Իրավական այս նորմերը, անշուշտ, արտացոլում էին ինչ-որ ունի հասարակական հարաբերություններ: Հարց է ծագում. ինչպե՞ս է առաջացել այդ ինստիտուտը՝ որպես իրավական երևույթ: Ասորիքում գործող «Կոնստանտինի, Թեոդոսի և Հուսի օրենքների» հետ համեմատելիս նկատում ենք, որ նույն տիպի նորմեր այդ շրջաններում գոյություն ունեին խաչակրաց արշավանքներից մի քանի դար առաջ:

Հռոմա-ասորական այդ կողերսը («Կոնստանտինի, Թեոդոսի և Հուսի օրենքները»⁵) կազմվել էր Հուստինիանոսի կողերսից կես դար առաջ, V դարի երկրորդ կեսին⁶: Հռոմեական իրավունքի շատ դրույթներ այդ կողերսում մեծապես կերպարանափոխված էին, իսկ նրա նորմերը ավելի էին հարմարեցված Մերձավոր արևելքի հասարակական հարաբերություններին և սովորույթներին⁷, քան Հուստինիանոսի հրատարակած օրենքները: Հռոմա-ասորական

³ Livres des assises de la cour des bourgeois, chap. CCIX. Assises de Jérusalem, T. II, P. p. A. A. Beugnot. Paris, 1843, pp. 141—142.

⁴ Ibid., p. 142.

⁵ Leges Constantinī Theodosii Leonis, Syrisch-römisches Rechtsbuch aus dem fünften Jahrhundert. Hrsg. von K. Bruns und E. Sachau, Leipzig, 1880.

⁶ K. Bruns. Allgemeine juristische Beurteilung des Rechtsbuches, Syrisch-römisches Rechtsbuch. 111. Teil, SS. 318, ff. P. Collinet, Histoire de l'école de droit de Beyrouth, Paris, 1925, pp. 292—293. Н. В. Пигулевская, Сирийский законник (история памятника), Учёные записки ЛГУ. № 128. Серия востоковедческих наук, вып. 3, Ленинград, 1952, стр. 55 и сл.

⁷ R. Taubenschlag, Il diritto provinciale romano nel libro syro-romano, Opera minora. I. Band, Warszawa, 1959, pp. 293, etc. L. Mittels, Reichsrecht des Römischen Kaiserreiches, Leipzig, 1891, SS. 313, ff. R. Taubenschlag, Rzymskie prawo prywatne na tle praw antycznych, Warszawa, 1955, str. 346 i tnn. Н. В. Пигулевская, Сирийский законник, стр. 59 и сл. Ավելի ուշ հայկական սովորույթը, որը հայտնի էր Ասորականի հայկական դատաստանագրքից, որ ստեղծված էր 18-րդ դարում, ընդունում էր հռոմա-ասորական օրենքները իրեն Հուստինիանոս կայսրի օրենքների ժողովածու: 86'ս

կողերսը լայնորեն տարածված էր Արևելքում: Նա մի տեսակ արգելք էր հանդիսանում Հուստինիանոսի օրենքների տարածման համար: Դրա հետևանքով կայսրության արևելյան սլավոնացիաներում Հուստինիանոսի օրենսդրությունը ազդեցություն չունեի: Հռոմա-ասորական կողերսը գործում էր Մերձավոր արևելքի ընդարձակ տերիտորիաներում: Այդ դատաստանագիրքը հայտնի է երկու հնագույն ասորական խմբագրություններով՝ ավելի հին ու ընդարձակ (ըստ լոնդոնյան ձեռագրի) և համեմատաբար նոր ու համառոտ (ըստ փարիզյան ձեռագրի)⁸: Ինչպես կարծում են հետազոտողները, այդ դատաստանագիրքը կազմված է եղել հունարեն և պահպանվել է մի շարք թարգմանությունների միջոցով՝ ասորերեն, հայերեն (որ կատարված է 1197 թ.) և արաբերեն (հնագույն ձեռագիրը վերաբերում է XIII դարին)⁹: Այս թարգմանությունները ամենայն հավաստիությամբ, կարող են վկայել, որ հռոմա-ասորական օրենքները ուղադրություն են գրավել, օգտագործվել են և ինչ-որ կարիքներ են բավարարել XI, XII և XIII դարերում:

Այդ օրենքների ասորական տարբերակի համաձայն, ազատ մարդը կարող էր ստրկության վաճառվել հետևյալ պայմանների առկայության դեպքում. եթե համաձայնություն էր հայանում վաճառվելու և մերժում էր իր ազատությունը, եթե հասել էր որոշակի տարիքի (20 կամ 25), և եթե ստանում էր իր գնի որոշ մասը: Այս են վկայում օրենսգրքի լոնդոնյան և փարիզյան խմբագրությունները և Վատիկանի գրադարանի ձեռագրերը¹⁰:

2

Ա. Ղլջյանը կարծում էր, որ հռոմա-ասորական դատաստանագրքի հնագույն թարգմանություններից մեկը հայերենն է¹¹: Ներկայումս պատմաբաններն ընդունում են, որ այդ դատաստանագիրքը հայերեն է թարգմանել ներսես Լամբրոնացին 1197 թ.:

Ասորական դատաստանագիրքը լայնորեն տարածված էր հայերի մեջ: Այն օգտագործվում էր Կիլիկյան թագավորությունում, ըստ երևույթին, նրան գիտում էին նաև Կիլիկիայի սահմաններից դուրս: Այդ են վկայում դատաստանագրքի բազմաթիվ հայերեն ձեռագրերը, որոնք կազմվել են բազմաթիվ դարերի ընթացքում¹²:

Ասորական հայոց դատաստանագրքի առաջարան, Մատենադարան, ձեռ. № 7383: См. также Ф. Г. Иогосян, Астраханский армянский судебник, Автореферат, Ереван, 1964, стр. 13.

⁸ Н. В. Пигулевская, Сирийский законник, стр. 52 и сл.

⁹ Там же, стр. 61.

¹⁰ Die Syrische Version aus der Londoner Handschrift, Syrisch-römisches Rechtsbuch, I. Teil, § 73, S. 19; II. Teil, SS. 21—22, Die syrische Version aus der Pariser Handschrift. Ibid, I. Teil, § 31, II. Teil, 3.55. Leges Constantini Theodosii Leonis, R. I, § 26 Syrische Rechtsbücher, I. Band, Berlin, 1907, SS. 12—15. R. II, § 37, SS. 66—69. R. III, § 73, SS. 164—165. См. Н. В. Пигулевская, Сирийский законник, стр. 59.

¹¹ Ա. Ղլճեան, Առաջարան, Ասորոց դատաստանագիրքը..., Լոյս ընծայեց Ա. Վ. Ղլճեան, 1917:

¹² Տե՛ս Մատենադարան, 15—16-րդ դարերի ձեռագրեր, № 8926 և 778: Ասորական հայկական դատաստանագրքի հեղինակները 18-րդ դարում օգտագործել են այդ դատաստանագրքի 4 օրինակներ: Տե՛ս Ասորական դատաստանագրքի առաջարան: Մատենադարան, ձեռ. № 7383:

Այժմ տեսնենք, թե հոռիմաստորական դատաստանագրքի հայկական տարբերակում ինչ է ասված ինքն իրեն ստրկության վաճառելու մասին:

Դատարանում ազատ մարդուն հարցնում են նրա վիճակի մասին և նա պատասխանում է, թե ինքն ստրուկ է: Ապա նա ինքն իրեն հանձնում է զնորդին¹³ և միաժամանակ հանձնվում է այն մարդուն («մատնիչին»), որն իրականացնում է հանձնման ակտը¹⁴: Եթե նրա 20 տարին լրացել է, ապա նա կորցնում է իր ազատությունը¹⁵, և օրենքը նրան օգնել չի կարող¹⁶: Իր ազատությունն օտարողը առավել հա կորցնում է այն, եթե վաճառողը վաճառվողին տվել է վերջինիս զնի մի մասը և կամ եթե ինքն իրեն վաճառողը ծախսել է իր հասանելիքը: Այդ դեպքում հա դառնում է զնորդի ստրուկը¹⁷:

Հաջորդ հոգևածում խոսվում է կնոջ ինքնավաճառման մասին: Ազատ կնոջը նույնպես հարցնում են նրա վիճակի մասին և նա պատասխանում է, թե ինքն ստրուկ է¹⁸: Ապա նրան համարում են իր իսկ օժիտի մի մասը¹⁹: Եթե կնոջ 20 տարին լրացել է, ապա նա կորցնում է յուր ազատությունը, իսկ օրենքն ի վիճակի չէ օգնել նրան՝ վերստանալու իր ազատությունը²⁰: Նա հանձնվում է այն մարդուն, որը զնել է նրան կամ ստացել որպես իր կնոջ օժիտի մի մասը²¹: Եթե վաճառվող կինը 20 տարեկանից փոքր է, ապա օրենքը կարող է նրան վերադարձնել իր ազատությունը: Այդ դեպքում կինը ազատվում է ստրկական վիճակից և դառնում ազատ²²:

Ըստ հայկական թարգմանության, իր ազատությունը վաճառող մարդը ազատ է մնում մինչև իր ազատությունն օտարելու մոմենտը: Նա անմիջականորեն զործարքի մեջ է մտնում այն մարդու հետ, ով զնում է իր սեփական անձը: Լոնդոնյան և, հատկապես, փարիզյան խմբագրությունների համաձայն, այս երկուսի զործարքը միջնորդվում է վաճառողի զործունեությամբ: Ինքն իրեն վաճառողը իր համաձայնությունն է հայտնում վաճառողի զործունեությանը կամ նրան է «հանձնում» իր կամքը: Երբ ազատ մարդը իր անձը վաճառում է մեկ ուրիշի՝ վաճառողի միջնորդությամբ, այդ դեպքում ինքնավաճառումը հանդես է գալիս որպես վաճառք՝ ուրիշի կողմից: Դատաստանագրքի հայկական թարգմանության մեջ վերջին դեպքը ավելի աղերսալից արտահայտություն ունի:

Սակայն հայկական դատաստանագրքում ևս միջնորդը լիովին չի անհայտանում: Սկզբում դա այն անձն է, որն իրականացնում է հանձնման ակտը, իսկ հետո՝ վաճառողը, որը վաճառվողի հետ կիսում է վերջինիս զնի դիմաց ստացված գումարը: Հայկական դատաստանագրքում միջնորդ-վաճառողն ան-

¹³ «...և տայ զինքն 'ի ձեռս զնորդին...» (Die armenische Version, 18, S. 107):

¹⁴ «...և լինի մատնիչ անձինն իւրոյ...» (ibid.):

¹⁵ «...թէ ամաց ի իցէ կորոյս պանծնիշխանութիւն իւր...» (ibid.):

¹⁶ «...և ոչ կարէ օգնել նմա արկեթս...» (ibid.):

¹⁷ «...և էարբ մնայ ծառայ...» (ibid.):

¹⁸ «Եթէ կին որ անձնիշխան ասէ 'ի վերայ անձինն իւրոյ ծառայ գոլ...» (ibid., 19, S. 107):

¹⁹ «...և տան զնա 'ի պողոտս...» (ibid.):

²⁰ «...ոչ արգել իւր նամասս այլ կորոյս զանձնիշխանութիւն իւր...» (ibid.):

²¹ «...և մնայ ծառայ առ այն, որ զնեաց զնա կամ որ էառ 'ի պողոտս կնոջ իւրոյ» (ibid., SS. 107—108):

²² Ibid., S. 108:

հայտնում է միայն այն հոդվածում, որ խոսվում է ազատ կնոջ ինքնավաճառման պայմանների մասին:

Ո՞րն է «Կոնստանտինի, Թևոդոսի և Լևոնի օրենքների» հայկական վերսիայի վերը նշված առանձնահատկության պատմական իմաստը:

Այդ օրենքների գործունեության շրջանում պարտքի դիմաց ստրկացնելու ինստիտուտը արդեն վերացած էր և չէր կիրառվում: Դրա փոխարեն ինքնավաճառման նորմերը պահպանվել էին, իսկ նրանց նշանակությունը նույնիսկ մեծացել էր: Ավելի ուշ դրանք սրբագործվել էին եկեղեցու հեղինակությամբ և մտցվել եկեղեցական գործող օրենսդրության մեջ: Այդ պատճառով հռոմաստրական դատաստանագրքի ավելի ուշ թարգմանությունների մեջ ինքն իրեն ստրկության վաճառելու պրոցեսը հանդես է գալիս առանց որևէ մեկի միջնորդության՝ որպես անմիջականորեն ինքնավաճառում, ըստ որում վաճառվողը զնորդին է հանձնվում միջնորդ-վաճառորդի միջոցով:

3

Երուսաղեմի թագավորության «Քաղաքացիների դատարանի աստիգների գրքի» վերը քննարկված դրույթներում խոսքը վերաբերում է վաճառքի միևնույն պայմաններին: Տարբերությունները գլխավորապես վերաբերում են առանձին ձևակերպումներին և համապատասխան դրույթների շարադրման մանրամասներին: Հռոմա-ասորական դատաստանագրքում առաջին պլանի վրա է դրված ինքնավաճառողի տարիքը և այն, որ վերջինս ընդունում է իր ազատությունը, իսկ որպես լրացում նշվում է վաճառքի գնի մի մասը վաճառվողի կողմից ստանալու հանգամանքը: Երուսաղեմի թագավորության դատաստանագրքում, տարիքից բացի, առաջին պլանի վրա է դրված վաճառքի գնի մի մասը ստանալու փաստը: Այս շեղումը, ամենայն հավանականությամբ, կապված է միևնույն գլխի ուրիշ դրույթների բովանդակության հետ, ինչպես նաև այն բանի հետ, որ քաղաքացիները ավելի էին շահագրգռված հնչյուն դրամ ձեռք բերելու հարցում, քան հունական հոգևորականության ներկայացուցիչները, այն հոգևորականության, որը մասնակցել էր հռոմա-ասորական դատաստանագրքի կազմելու գործին: Սակայն հնարավոր է, որ այստեղ զգացվել է նաև հռոմեական իրավունքի ազդեցությունը. հայտնի է, որ այդ իրավունքի համաձայն, ինքնավաճառման ժամանակ առաջին պլանի է մղվում ինքնավաճառի կողմից իր գնի մի մասը ստանալու հանգամանքը (Dig. XL, 12): Ամենափոքր հասակը 15 տարին է, որի ժամանակ, ըստ Քաղաքացիների դատարանի դատաստանագրքի մարդը կարող էր ստրկության վաճառվել՝ վերևում շարադրված պայմանների առկայության դեպքում. այդ տարիքը համապատասխանում էր Երուսաղեմի թագավորության տարիքային փոխհարաբերություններին և իրավական նորմերին: Հռոմա-ասորական իրավունքից կատարվող այս շեղումը առավել էս հնարավոր էր նաև այն պատճառով, որ վերջինս նույնպես թույլ էր տալիս տարիքային շեղումներ (20 և 25 տարի):

Այսպիսով, ստրկության վաճառելու՝ մեր քննարկած հիմնական դրույթները թե՛ հռոմա-ասորական դատաստանագրքում, և թե՛ քաղաքացիների դատարանի դատաստանագրքում միևնույնն են: Տարբեր են միայն նրանց հերթականությունն ու ձևակերպումները: Այդ պատճառով էլ կարելի է ենթադրել, որ Քաղաքացիների դատարանի դատաստանագրքի դրույթների իրավական ձևը

բխում է հռոմա-ասորական օրենքների՝ այն ժամանակ գործող տարբեր վերսիսաներից:

Սակայն այդ դրույթները միաժամանակ ունեցել են նաև մի այլ աղբյուր: Հրեաների ու քրիստոնյաների «սուրբ գրքում»՝ Հին կտակարանում կան մի շարք հատվածներ, որոնցում նշված է չքավորների՝ իրենք իրենց ստրկության վաճառելու փաստը: Այսպես, Նրեմիայի գրքում ասված է, որ հարուստը պարտավոր է 7 տարուց հետո ազատել այն չքավորին, որը ժամանակավորապես ստրկության է հանձնվել իրեն (Jer 34: 14): Այստեղ ազատելու պարտականությունը գուցորվում է պարտքի դիմաց ստրուկ դարձնելու ինստիտուտի հետ: Ազատների ինքնավաճառումը օրինականացվում է նաև Հնգամատյանում (Ex. 21 : 2—6, Lev, 25 : 39, Dt. 25 : 25—17):

Սակայն պետք է նշել, որ աստվածաշնչային (և թալմուդիստական) իրավունքի մի շարք պայմաններ, որոնք մեղմացնում կամ ժամանակի տեսակետից թեթևացնում էին ինքն իրեն ստրկության վաճառած անձի վիճակը, իրենց արտահայտությունը չեն գտել Նրուսաղեմի թագավորության օրենսդրության մեջ: Քաղաքացիների դատարանի դատաստանագրքում խոսք չկա այն մասին, որ ստրկացվածը պահպանում է որոշ քաղաքացիական իրավունքներ, որ նա պետք է ազատվի 7 տարուց հետո, որ պետք է պահպանել հոբելյանական տարին և այլն:

Սեփական աշխատանքով պարտքը, վնասը կամ մեղքը հատուցելու մասին խոսվում է ինչպես Հին կտակարանում, այնպես էլ Թալմուդում: Մինչդեռ սենյորիային ծառայելու և քաղաքացիների դատարանից կախյալ լինելու հանգամանքները արտացոլում էին արևմտյան ասպետների ու բարոնների ստեղծած թագավորության քաղաքներում իշխած հասարակական հարաբերությունների առանձնահատկությունները: Համապատասխան հասարակական հարաբերություններով պայմանավորված առանձնահատկություններ ունի նաև հռոմա-ասորական դատաստանագրքի արարական վերսիսան, որի համաձայն ստրկության վաճառված մարդու ազատության իրավունքը գտնվում էր համապատասխան պաշտոնյայի ձեռքում²³: Պաղեստինի հնագույն իրավունքի դրույթները էլ ավելի մեծ փոփոխությունների ենթարկվեցին Նրուսաղեմի թագավորության մեջ XII—XIII դարերում:

Վերջապես, դատաստանագիրքը մահվան դատավճիռ է սուլառնում այն անձին, ով քրիստոնյա տղամարդուն կամ կնոջը ստրկության կվաճառի հակառակ վերջինիս կամքի²⁴: Այս կանոնը իր բովանդակության հիմնական մասով վերարտադրում է Հնգամատյանի համապատասխան հատվածը. «Ելից» գիրքը մահապատիժ է նախատեսում այն մարդուն, ով կգողանա և կվաճառի մեկին (Ex. 21 : 16): Քաղաքացիների դատարանի դատաստանագրքում մարդագողությունը ստացել է ավելի վերացական արտահայտություն, իսկ վաճառքի օրյեկտը՝ ավելի սուկցիֆիկ ու ժամանակակից. այստեղ խոսքը վերաբերում է քրիստոնյային, իսկ կախաղանը մահապատժի սովորական միջոցն էր և արևմտաեվրոպական իշխանություններում, և՛ խաչակիրների ստեղծած գաղութներում:

²³ Die arabische Version, Syrisch-römisches Rechtsbuch. I. Teil, §§ 37, 118, SS. 76, 93, II. Teil, SS. 88, 112.

²⁴ Livres des assises de la cour des bourgeois, chap. CCIX, p. 14.

Քրիստոնյային ստրկության վաճառելու հարցը քննարկվում է նաև Սրմ-
րատ Սպարապետի «Դատաստանագրքում», որը գործում էր Կիլիկյան Հայաս-
տանում: Այստեղ խոսվում է այն մարդու մասին, որը գողացել է քրիստոն-
յայի և վաճառել նրան «անհավատի»²⁵: Տվյալ հոդվածում ասված է, որ «հին
օրենքների համաձայն չի կարող պատահել, որ նա կենդանի մնա»²⁶: Մարդա-
յոգությունը կապված է բռնության հետ և բացառում է վաճառվողի համա-
ձայնությունը: Բայց այս հանգամանքների վերաբերյալ որևէ ցուցմունքի բա-
ղակայունությունը Դատաստանագրքում, ըստ երևույթին, վկայում է այն մասին,
որ առհասարակ չէր թույլատրվում քրիստոնյայի վաճառքը «անհավատներին»,
անկախ այն բանից, թե վաճառքը կատարված էր վաճառվողի կամքին հակա-
ռակ, թե՞ նրա համաձայնությամբ: Ըստ որում, քրիստոնյայի վաճառքն ար-
վելով հոդվածը արգելում է նրան վաճառել «անհավատներին», մինչդեռ «Դա-
տաստանագրքը» ոչինչ չի ասում քրիստոնյային նույն հավատի տեր մարդուն
վաճառելն արգելելու մասին: Այս լուրջությունը, ըստ էության, հանդիսանում է
սղատ քրիստոնյային ստրկության վաճառելու իրավական նորմի թույլ բա-
ղասում:

Ակնհայտ է, որ քննարկվող դրույթը պալիս է աստվածաշնչական իրավուն-
քից, որի համապատասխան կանոնի մասին խոսք եղավ վերևում: Սակայն
Կիլիկյան դատաստանագրքում տվյալ դրույթն ստացել է իր հետագա զարգա-
ցումը:

Քրիստոնյային «անհավատներին» ստրկության վաճառող մարդու նկատ-
մամբ կարելի է ներողամտությամբ ցուցաբերել, եթե ստրկացված քրիստոնյան
վերստանա իր ազատությունը: Վաճառողը պետք է ազատի ստրկության վա-
ճառվածին և վերադարձնի նրան, ըստ որում նա այդ կարող է անել երկու ձևով՝
զողանալով նրան կամ ետ գնելով: Դրանով նա ազատվում է մահապատժից,
բայց ոչ պատժից՝ առհասարակ. իր գործած մեղքի համար նա պետք է հատու-
յի ցմահ բանտարկությամբ: Ավելին. նույնիսկ այդ դեպքում նրա բախտը
կախված է դատավորի կամքից, մեղապարտը կարող է երկու աչքից կուրացվել
այն բանի հիման վրա, որ իր գործերով արժանի է նաև այդ պատժին²⁷:

Այս դրույթների իրավական ձևերը Կիլիկյան դատաստանագրքի մեջ են
մտել Մխիթար Գոշի «Դատաստանագրքից»: Սակայն վերջինիս համապատաս-
խան հոդվածում նշված է նաև մի ավելի հին աղբյուր՝ Հին կտակարանը²⁸:
Այսպիսով, Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» մեջ մտել է հնագույն
իրավունքի նորման: Դրա երևան գալը, ըստ երևույթին, կապված է հասարա-

²⁵ «Մարդ որ քրիստոնէ գողնայ, եւ տանի անարինաց ծախէ» (Armenisches Rechtsbuch. Band I. hrsg. von J. Karst, Strassburg, 1905, § 177) С м б а т С п а р а п е т, Су-
дебник. Составление текста, перевод и примечания А. Галстяна, Ереван, 1958, ԺԾԳ,
стр. 138. Տես Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գուշգոստարի) (Կիլիկիան դատաստա-
նագիրք XIII րդ դարի)... Լույս ընծայեց Ա. Վ. Ղևնան, Էջմիածին, 1918, ԸԼԱ, էջ 68:

²⁶ «... եւ անհնար է ի մին արինացն թէ ապրի» (Armenisches Rechtsbuch, Band I.
§ 177, С м б а т С п а р а п е т, Судебник, ԸԼԱ, стр. 138).

²⁷ Armenisches Rechtsbuch, Band I, ԸԻԵ, S. 177, С м б а т С п а р а п е т, Судеб-
ник, ԺԾԶ, стр. 138.

²⁸ Մխիթարայ Գոշի դատաստանագիրք Հայոց, Էջմիածին, 1880, Բ, ԻԳ, էջ 122—123:

կական այն հարաբերությունների հետ, որոնց շնորհիվ հնագույն իրավունքը վերականգնվում էր նաև այդ ժամանակվա լատինական Պաղեստինում:

Ինքնավաճառումը և պարտքի դիմաց ստրկացումը միմյանց մոտ ինստիտուտներ են. նրանց միջև միջանկյալ դրույթուն ունի ծնողների կողմից երեխաներին վաճառելու ինստիտուտը: Վերջինս Երուսաղեմի թագավորության օրենսդրության մեջ ոչ մի արտահայտություն չի գտել: Հուստինիանոսի օրենսդրության մեջ, որը երեխաների վաճառք թույլ է տալիս միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում և այն էլ միայն նորածինների, այդ մասին մի քանի անգամ է խոսվում: Հստ երևույթին, ինքնավաճառման և պարտքի դիմաց ստրկության վաճառելու վերաբերյալ Երուսաղեմի թագավորության մեջ գործող դրույթների վրա հոռմեական իրավունքը շատ թույլ է սղղել կամ բոլորովին չի ազդել: Մինչդեռ ծնողների կողմից երեխաներին վաճառելու հարցը իր արտահայտությունն է գտել Կիլիկյան թագավորության իրավունքում:

Դրա համապատասխան դրույթներին մենք հանդիպում ենք Մխիթար Գոշի «Դատաստանագրքում»²⁹. որի մեջ նրանք անցել են Աստվածաշնչից, ինչպես նաև Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում»: Վերջինիս համաձայն, ծնողներն իրավունք ունեն վաճառել իրենց աղջկան, եթե իրենց չթավորություն է սպառնում³⁰: Այս պարապայում աղջիկը վաճառվում էր քրիստոնյայի, որը պետք է տիրեր վաճառվածին՝ իբրև ստրկուհու: Գնող քրիստոնյային արգելված էր աղջկան վաճառել «անհավատի»: Եթե աղջկա ծնողները կամ աղգականները հետ գնեին նրան, աղջիկը ազատվում էր ստրկությունից: Գնորդը իրավունք ուներ ամուսնանալ աղջկա հետ կամ նրան կնության տալ իր որդուն, աղգականին կամ վասալին, իր ցանկության դեպքում տալով նաև օժիտ: Իսկ եթե ոչ մի այդպիսի բան չկատարվի, ապա ստրկության վաճառված դուստրը ստրուկ է մնում այնքան ժամանակ, քանի դեռ չի վերադարձվել զնոդի վճարած գումարը: Վերադարձնելու դեպքում նա ազատ է արձակվում³¹:

Երուսաղեմի թագավորության մեջ, ինչպես և ֆեոդալական դարաշրջանի ուրիշ իշխանություններում, կային ոչ ասպետական ծաղումով ֆեոդերի տերեր: Լինելով իշխող դասակարգի ներկայացուցիչներ, նրանք չէին օգտվում ասպետների բոլոր իրավունքներից: Եթե այդպիսի ոչ ասպետ ֆեոդատերը (ֆեոդալը) պարտապան դառնալով չէր վճարում իր պարտքը, գործը հասնում էր Բարձրագույն դատարանին, այն դերագույն ֆեոդալական օրգանին, որի ձեռքում կենսորոնացած էր օրենսդրական, պործադիր և դատական իշխանությունը: Եթե պարզվում էր, որ պարտապանը անվճարունակ է, ապա այդ օրգանը վաճառքի էր հանում նրա ֆեոդը: Բացարձակ սնանկության դեպքում պարտքը չմարող պարտապանը հանձնվում էր պարտատիրոջ լիակատար իրավասությանը: Ֆեոդալական սովորույթներն ու օրենքները որոշակի պայմաններ էին թելադրում այդ կարգի անադատներին պահելու մասին: Վերջիններս պետք է կատարեին որոշ աշխատանք, որը օրենքի ու սովորույթների համաձայն պետք է շատ ծանր շիիներ: Եթե այդպիսի անադատը (ստրուկը) սեփական աշխատանքով

²⁹ Ibid., Բ., ԻԱ, էջ 117—118.

³⁰ «...որ զիր դուստրն վասն աղքատութեան ծախէ...» (Armenisches Rechtshuch, B. I, հվ. 2, S. 170). См 6 а т С п а р а п е т, Судебник, հվ. 2, стр. 133.

³¹ Armenisches Rechtshuch, B. I, հվ. 2, SS. 170—171. См 6 а т С п а р а п е т, Судебник, հվ. 2, стр. 133.

կամ որևէ այլ ձևով չվճարեր իր պարտքը, նա կարող էր իր ողջ կյանքի ընթացքում ստրուկ մնալ: Բայց օրենքը նրան թույլ էր տալիս սեփական աշխատանքով պարտահատույց լինել: Այդ պարագայում նա ազատվում էր³²:

Պարտքը չվճարելու հետևանքով ստրկության մեջ ընկած նախկին ֆեոդատերը կոչվում էր ստրուկ (esclave), թեպետև ուրիշ դեպքերում նրան կոչում էին հաճեցված կամ ընձեռված (livre): Ինչպես տեսնում ենք, այս տերմինները լիովին համապատասխանում էին այդ կարգի մարդկանց իրական վիճակին:

Ինչպես արդեն նշել ենք, չվճարված պարտքի դիմաց ստրկացնելը Արևելքի հասարակական հարաբերություններին հատուկ հնագույն երևույթներից մեկն էր և հանդիսանում էր Շումերի, Բաբելոնի, Ասորիքի ու Մերձավոր արևելքի այլ երկրների ստրկատիրական իրավունքի ինստիտուտներից մեկը: Գիտական գրականության մեջ ցույց է տրված, որ հնագույն իրավունքը որոշակի ազդեցություն է ունեցել նաև հելլենիստական դարաշրջանում³³: Պետք է ասել, որ հելլենիստական շրջանի Մերձավոր արևելքում լայնորեն տարածված էր չվճարված պարտքի դիմաց պարտապանին ստրկացնելու և սեփական աշխատանքով պարտահատույց լինելու երևույթը: Սակայն սկզբնաղբյուրները հնարավորություն չեն տալիս որևէ կապ տեսնելու հելլենիստական իրավական նորմերի և Նրուսադեմի թագավորության մեջ գործող պարտազանց ստրկության միջև:

Պարտքը չվճարելու հետևանքով ստրկացնելու (պարտազանց ստրկության), ինստիտուտը պահպանված է Հին կտակարանում (Is. 50 : 1, Am. 2 : 6), իսկ Հնգամատյանում կան իրավական ավելի կոնկրետ սահմանումներ (Lev. 25 : 39—41): Թագավորության օրենսդիրների կողմից օգտագործված աստվածաշնչային որոշ արտահայտությունները հարմարեցվում էին դատական ռեալ պրակտիկային և այն տարածված դատական գործերին, որոնք իրավական սահմանում էին պահանջում:

«Քաղաքացիների դատարանի ասսիզների գրքում» հանդիպում են նաև ավելի բարդ իրավական դրույթներ, որոնք կարգավորում էին չվճարված պարտքի դիմաց ստրկացնելու հանգամանքները:

Պարտատերը կարող էր պահանջել, որ պարտքի դիմաց մի այլ պարտատիրոջ հանձնված պարտապանը վճարի իր պարտքը: Նա կարող էր երկրորդ պարտատիրոջից վերցնել վերջինիս հանձնված պարտապանին, եթե վճարեր նրա պահանջած գումարը: Եթե պարտատիրոջ իշխանության տակ գտնվող մարդը միաժամանակ պարտք ունենար էլի ուրիշ պարտատերերի, ապա վերջիններս կարող էին կասկած հայտնել տվյալ պարտատիրոջ պահանջի արդարացիության մասին. այդ դեպքում պարտատերը պետք է բացատրություն տար դատարանում³⁴: Այն հանգամանքը, որ հայցվորի դերում հանդես են գալիս մի քանի պարտատերեր, որոնք պահանջ են ներկայացնում միևնույն պարտապանին, հաստատում է այն փաստը, որ թագավորության մեջ պարտքի դիմաց

³² Livres de Jean d'Ibelin, chap. CXVI, pp. 188—189; chap. CLXXXVIII, pp. 300—301.

³³ R. Taubenschlag, Das babylonische Recht in den griechischen Papyri. The Journal of Juristic Papyrology. Vol. VII—VIII, 1953—1954, Warszawa, 1954, pp. 169 etc. Eadem, Rzymskie prawo prywatne na tle praw antycznych, str. 353—354.

³⁴ Livre des assises de la cour des bourgeois, chap. LXVI, p. 56.

ստրկացման դեպքերը հաճախակի էին: Տվյալ իրավական նորմի կազուխստական բնույթը նույնպես այդ է վկայում:

Իշխող դասակարգի լիիրավ ներկայացուցիչները՝ ասպետները թույլ չէին տալիս, որ պարտքի դիմաց ստրկացման օրենքը թափանցի իրենց միջավայրը: Թագավորության սովորույթներով ու օրենքներով արգելված էր ասպետին ձերբակալել պարտքը չվճարելու համար³⁵: Հասկանալի է, որ այդ իսկ օրենքների համաձայն ասպետը չէր կարող ստրկացվել չվճարված պարտքի դիմաց:

Ասպետներին ապահովելով ստրկացման վտանգից, իրավական այս նորմերը միևնույն ժամանակ քայքայում էին նրանց ֆինանսական դրությունը: Հարուստ քաղաքացիները, որ այդ օրենքով զրկված էին պարտապան ասպետների նկատմամբ հայց հարուցելու իրավունքից, գերադասում էին նրանց պարտք չտալ կամ քիչ տալ: Մնանկացած ասպետները կարող էին չվճարել իրենց պարտքերը. սա, իր հերթին, օժանդակում էր քաղաքացիների աղքատացմանը: Իրենց համար ստեղծելով առանձնահատուկ իրավունք, ասպետները դրանով իսկ մեկուսացնում էին իրենց դասը և վերածվում առանձին փակ կաստայի:

* * *

Մինչև հիմա քննարկվում էին Արևելքում գործող իրավական այն նորմերը, որոնք կարող էին ազդել Երուսաղեմի թագավորության օրենսդրության վրա: Երա հետ մեկտեղ, Արևմտյան Նվրոպայի մի շարք շրջաններում պարտադանց ստրկությանը վերաբերող դրույթները մտնում էին սովորույթների և օրենքների մեջ: Սակայն դրանք կամ շատ փոքրիկ տերիտորիաներ էին, կամ էլ այնպիսի երկրներ, որոնք ավելի քիչ էին կապված խաչակրաց արշավանքների հետ: Այդ պատճառով էլ եթե համապատասխան իրավական նորմերը պարզապես իսկ թափանցել Արևելք, նրանց ազդեցությունը շատ չնչին կլիներ:

Բայց առդյուր իրավական այդ ձևերը չէին առաջացել հենց Երուսաղեմի թագավորության մեջ, անկախ արևելյան և արևմտա-նվրոպական իրավունքից: Այս հարցին պատասխանելիս պետք է հիշել, որ Արևմտյան Նվրոպայում, բացի միջերկրածովային որոշ շրջաններից, ստրկությունը վերացել էր արդեն XI դարի սկզբներին: Այդ պատճառով էլ պարտադանց ստրկությունը և ինքնավաճառումը, որոնց խաչակիրները հանդիպեցին գաղութներում, նրանց համար օտար երևույթներ էին, և դրա շնորհիվ էլ ֆեոդալական հարաբերությունների գերիշխանության պայմաններում այդ տիպի դարգացած իրավունքի ստեղծումը քիչ հավանական է դառնում: Երբ XV—XVI դարերում Վեստինդիայի գաղութներում կրկին վերածնվեց պարտադանց ստրկությունը³⁶, նրա աշխուժացումը բոլորովին էլ չզուգորդվեց այնպիսի մի դարգացած իրավունքի ստեղծումով, որը կարգավորեր աղատներին ստրկացնելը: XII—XIII դարերում արևելյան միջերկրածովային շրջանների գաղութներում լատինական նվաճողները, ամենայն

³⁵ Livre de Jean d'Idelin, chap. CXV, p. 188.

³⁶ John Esquemeling, The Buccaneers of America. Edited with an Introduction by H. Powell, L., 1893, pp. 51—52. См. Д. Генн, Похождения Ескамелена, пирата и писателя, Неделя, 21 января, 1968, № 4, стр. 10—11.

հալանականության մեջ, փոխ առան աշխատել պահպանված իրավական հին նորմերը, որի հետևանքով էլ Երուսաղեմի թագավորությունում ստեղծվեց կամ վերաձևվեց մի դարգացած իրավունք, որը կարգավորում էր ինքնավաճառումը և պարտքի դիմաց ստրկության վաճառելը: Այդ է հաստատում հին իրավունքի և երուսաղեմյան իրավունքի՝ համեմատվող իրավական դրույթների համարյա բառացի համընկնումը:

Եացի տեքստային նմանությունից, փոխառության մասին է վկայում նաև այն, թե ինչպես էին քննարկվում ասորիների, հրեաների, հայերի և տեղական այլ ժողովուրդների ներկայացուցիչների դանդաղները լատինական դատարաններում: Վկաների ընտրությունն աշխատել կարգավորվում էր պատասխանողի իրավունքով³¹, աստվածաշնչային-թալմուդական կամ ասորական իրավունքով, եթե պատասխանողը հրեա էր կամ ասորի: Երդումը տրվում էր տվյալ հավատացյալի «սրբազան գրքի» վրա. այստեղից հետևում է, որ դատարաններում օգտագործվում էին տարբեր «սրբազան գրքեր», որոնք միաժամանակ պարունակում էին իրավունքի հիմունքները: Առևտրական դատարաններում լատինացի դատավորները դատում էին ասորիների հետ միասին: Միանգամայն ակնհայտ է, որ տեղական օրենքները թափանցում էին Երուսաղեմի թագավորության լատինական դատարանները և օգտագործվում էին նրանց կողմից:

Վերջապես, հարց է ծագում, թե ինչով պետք է բացատրել հնագույն ինստիտուտների՝ առաջին հայացքից տարօրինակ թվացող այդ վերականգնումը: Խաչակիրների ստեղծած իշխանություններում գերիշխում էին բարոններն ու ասպետները: Խաչակիրները Հյուսիսային Ասորիք ու Պաղեստին բերեցին ֆեոդալական հարաբերությունների այն սխեման, որն Արևմտյան Եվրոպայում իշխում էր XI դարի վերջերին: Անընդմեջ պատերազմներն ու նվաճումները հսկայական ուժ էին տվել բարոններին ու ասպետներին: Իրենց ձեռքում կենտրոնացնելով օրենսդրական, զործադիր և դատական իշխանությունը, նրանք միաժամանակ հանդես էին գալիս որպես մի հզոր ռազմական-ֆեոդալական համայնք: Բարոններն ու ասպետները իշխում էին նաև քաղաքներում, իսկ քաղաքացիները ճնշված էին նրանց կողմից: Այդ ամենի հետևանքով զաղութներում ստեղծվել և ամրապնդվել էին արխայիկ հասարակական հարաբերություններ: Այդ պայմաններում հնարավոր դարձավ հնագույն ինստիտուտների և հնագույն իրավական ձևերի վերականգնումը: Պարտքի դիմաց ստրկության վաճառելու այն դրույթները, որոնք գործում էին Երուսաղեմի թագավորությունում, իրենց ընդհանուր բնույթով մոտավորապես համապատասխանում են Լիգիտիշտարի կոդեքսի (մոտավորապես մ. թ. ա. 1900 թ.) 14-րդ հոդվածին:

Երուսաղեմի թագավորության օրենսդրությամբ նախատեսված սլարտալանց ստրկությունը Մերձավոր արևելքի պատմության մեջ պարտքի դիմաց ստրկացման իրավական վերջին ձևն էր: Հիշյալ ժամանակաշրջանում նրա աշխուժացումը կապված էր նվաճումների և զաղութների կյանքի առանձնահատկությունների հետ: Դա մի տեսակ վերջին պայթյուն էր, որը հետևանք էր նվաճումների և պատմական պրոգրեսիվ զարգացման հնարավորություն չունեցող զաղութային կյանքի արխայիկ հարաբերությունների: Ահա թե ինչու չպետք է վարժանալ, որ կարճ ժամանակամիջոցում թուլացած այդ վերջին աշխուժացումը սնվում էր հնագույն իրավական նորմերով և շափազանց դաժան էր:

³¹ Livre des assises de la cour des bourgeois, chap. CCXLI, p. 172.

Բուլղոլիին այլ էր վիճակը Կիլիկյան Հայաստանում: Հայկական իրավունքում հնագույն կանոնները պահպանվում էին ըստ տրադիցիայի: Սմբատ Սպարապետը դրանք փոխ էր առել Մխիթար Գոշի «Դատաստանագրքից», որի մեջ այդ կանոնները անցել էին Աստվածաշնչից. XII դարի հայ իրավագետը ճշգրտորեն նշում է այդ անցումը:

Հայկական Կիլիկիայում այդ հնագույն կանոնները կամաց-կամաց մահանում էին: Միևնույն ժամանակ Կիլիկյան թագավորության մեջ վարգանում էր մի նոր ինստիտուտ՝ բանտը: XIII դարում նրան արդեն դիմում են շատ հաճախ և ամենատարբեր առիթներով³⁶: Հասարակական և իրավական հարարությունների արխայիկ ձևերը հետզհետե վերանում էին:

Д. ГЕННАДИЙ

ДРЕВНЕЙШЕЕ ПРАВО В СРЕДНЕВЕКОВОЙ ПАЛЕСТИНЕ И В КИЛИКИЙСКОМ ЦАРСТВЕ

Резюме

В глубокой древности на Востоке действовали институты самопродажи в неволю и обращения в рабство за неуплаченные долги. Самопродажа и долговое рабство оживают в Иерусалимском королевстве, созданном крестоносцами в Палестине, они продолжают действовать в армянском Киликийском царстве, при всем этом данные институты почти совсем не изучены в этих наиболее поздних формах их существования.

Своды законов, действовавшие в Иерусалимском королевстве, содержат положения о самопродаже в неволю. На основе анализа этих положений в статье сделан вывод, что их юридические формы восходят к римско-сирийскому судебнику, к «Законам Константина, Феодосия и Льва», в их различных версиях, действовавших на Ближнем Востоке. В статье рассматриваются особенности института самопродажи в неволю по армянской версии сирийского судебного кодекса, в последнем данный институт получил более адекватные формы. Указан и более древний его источник—Ветхий завет.

Рассматриваются положения о насильственной продаже христианина и о продаже дочери родителями, содержащиеся в «Армянском судебнике» Мхитара Гоша и в «Судебнике» Смбата Спарапета, а также нормы, регулировавшие долговое рабство в Иерусалимском королевстве.

Оживление самопродажи в неволю и долгового рабства в Иерусалимском королевстве объясняется условиями господства баронов и рыцарей и архаических общественных отношений в колониях, облекшихся в королевстве в древнейшие юридические формы. Среди армян эти институты действовали по традиции, а в армянском Киликийском XIII в. их уже вытесняет тюрьма.

³⁶ J. Karst, Armenisches Rechtsbuch, B. II, SS. 315—316 „Sämtliche vorgeführte Fälle von Gefängnisstrafe sind dem Mhitar'schen Rechte noch durchaus Fremd“ (ibid., S. 316). Ի. Կարստը ուզում է այդ դեպքերը բացատրել օտար ազդեցությամբ (ibid.), բայց չի ապացուցում իր ենթադրությունը: Ըստ երևույթին, ընդհանրապես հնարավոր չէ այդ ապացուցել: